ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#25

ԱՊՐԻԼ

«ԲԱՁՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ - 2016»

Կայացավ «ԲԱՁՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ - 2016» լրագրողական մրցանակաբաշխությունը

Սեմինար դասընթաց

Սեռականություն, տրանսգենդերություն և ինտերսեքս

«Սփյուռքի կամուրջ»

հանդիպում-քննարկում

Ինչ՞ու է կարևոր կանխարգելել ՄԻԱՎ-ը. Դասընթաց Գյումրի և Վանաձոր քաղաքներում

Աշխատանքային հանդիպում՝ «Հայաստանում ՄԻԱՎ և Տուբերկուլյոզին առնչվող ծրագրերի Գլոբալ Հիմնադրամի ֆինանսավորումից պետական ֆինանսավորման անցնելու գործընթացները և դրանց վրա քաղաքացիական հասարակության ազդեցության հնարավորությունները» թեմայով

Դասընթաց Հրազդանում

ԿԱՅԱՑԱՎ «ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ - 2016» ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2017 թ.-ի ապրիլի 6-ին կազմակերպել էր ԼԳԲՏՔԻ անձանց հարցերին առնչվող «ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ-2016» լրագրողական մրցույթը, որն արդեն երկրորդ տարին է անցկացվում: Մրցույթի կազմակերպումով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նպատակ ուներ լրագրողներին, միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին երկխոսության հրավիրելու միջոցով բարձրաձայնել ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումներին առնչվող հիմնախնդիրները՝ շեշտադրելով հանրային լրագրության և քաղաքացիների ներգրավվածության կարևորությունը, ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտման դեպքերը էթիկապես ճիշտ լուսաբանելը:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ, իրավապաշտպան Սերգեյ Գաբրիելյանը բացման խոսքում ներկայացրեց քննարկվող թեմայի կարևորելով այն լրատվամիջոցներին խրախուսելը, որոնք ոչ խտրական մոտեցում են ցուցաբերել ԼԳԲՏՔԻ անձանց առնչվող խնդիրները լուսաբանելիս և անաչառ տեղեկատվություն են տրամադրել հասարակությանը: Իր խոսքում Ս. Գաբրիելյանը նաև նշեց, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն բարձր է գնահատում եվրոպական երկրների որդեգրած քաղաքականությունը Հայաստանում ժողովրդավարական արժեքների կայացման և ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:
Ողջույնի խոսքով հանդես են եկել Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչ Լենե Վեթելանդը, Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպան պարոն Պետր Միկիսկան և Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան պարոն Բերնհարդ Մաթիաս Քիսլերը:

Ինչպես նշեցին խոսնակները, ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների պաշտպանության ու հավասարության խթանումը և արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու խրախուսումը առաջնային նշանակություն ունեն Հայաստանում գործող միջազգային կառույցների համար, ուստի իրենք պատրաստակամ են իրենց փորձը կիսելու Հայաստանի հետ և նպաստելու հավասարության ու հանդուրժողականության խթանմանը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:

Հանդիպմանը ներկա են եղել նաև ներկայացուցիչներ Հայաստանում Լիտվայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեսպանատներից, Եվրոպական միության պատվիրակությունից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, Եվրասիա Համագործակցության հիմնադրամից, ՀՀ Փաստաբանների պալատից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից և տարբեր լրատվամիջոցներից:

Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ՀՀ Արդարադատության նախարարությունից, ցավոք, ներկայացուցիչ չի մասնակցել կոնֆերանսին:
Հանդիպման առաջին նիստի կարևորելով այն լրատվամիջոցներին խրախուսելը, որոնք ոչ խտրական մոտեցում են ցուցաբերել ԼԳԲՏՔԻ անձանց առնչվող խնդիրները լուսաբանելիս և անաչառ տեղեկատվություն են տրամադրել հասարակությանը: Իր խոսքում Ս. Գաբրիելյանը նաև նշեց, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն բարձր է գնահատում եվրոպական երկրների որդեգրած քաղաքականությունը Հայաստանում ժողովրդավարական արժեքների կայացման և ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում:
Ողջույնի խոսքով հանդես են եկել Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչ Լենե Վեթելանդը, Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպան պարոն Պետր Միկիսկան և Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան պարոն Բերնհարդ Մաթիաս Քիսլերը:
Ինչպես նշեցին խոսնակները, ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների պաշտպանության ու հավասարության խթանումը և արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու խրախուսումը առաջնային նշանակություն ունեն Հայաստանում գործող միջազգային կառույցների համար, ուստի իրենք պատրաստակամ են իրենց փորձը կիսելու Հայաստանի հետ և նպաստելու հավասարության ու հանդուրժողականության

Հանդիպմանը ներկա են եղել նաև ներկայացուցիչներ Հայաստանում Լիտվայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեսպանատներից, Եվրոպական միության պատվիրակությունից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, Եվրասիա Համագործակցության հիմնադրամից, ՀՀ Փաստաբանների պալատից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից և տարբեր լրատվամիջոցներից:

Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ՀՀ Արդարադատության նախարարությունից, ցավոք, ներկայացուցիչ չի մասնակցել կոնֆերանսին:

Հանդիպման առաջին նիստի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչ Նարե Հովհաննիսյանը և հետազոտող Նանե Բագրատունին ներկայացրել են «ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ ատելության խոսքի, գենդերային կարծրատիպերի և մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումները ՀՀ-ում» և «ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ վերաբերմունքը, ատելության խոսքի դրսևորումները ու նրանց իրավունքների ոտնահարումները ՀՀ առցանց տիրույթում» հետազոտությունները, որոնք ՀԿ-ն իրականացրել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Հետազոտությունների նպատակն էր ուսումնասիրել ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի, ատելության խոսքի, ինչպես նաև իրավունքների խախտումների դեպքերը Երևանում, Հայաստանի 10 մարզերում և առցանց տիրույթում:

Այնուհետև «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Հայկ Հայրապետյանը և փաստաբաններ Արա Ղարագյոզյանը և Մարո Խաչատրյանը ներկայացրել են ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումների դրսևորումները Հայաստանում 2015-17 թվականներին՝ մասնավորապես քննարկման առարկա դարձնելով օրենսդրական այն բացերը, որոնք խոչընդոտում են ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների լիարժեք կիրառումը, ինչպես նաև իրավապահ մարմինների կանխակալ վերաբերմունքը, ինչը վստահության կորուստ է առաջացնում մարդկանց մեջ՝ իրենց իրավունքների պաշտպանության միջոցներին դիմելիս:

Հանդիպման երկրորդ հատվածում լրագրող Արման Ղարիբյանը և փարձագետ Աննա Նիկողոսյանը անդրադարձել են մամուլում ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների մեկնաբանման խնդիրներին՝ մասնավորապես շեշտելով

Բանախոսների ելույթներից հետո «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչ Արման Սահակյանը ներկայացրել է ԼԳԲՏՔԻ անձանց հիմնախնդիրներին առնչվող «ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ-2016» լրագրողական մրցանակաբաշխության արդյունքները:

Մրցանակաբաշխության նպատակն էր միավորել ԶԼՄ-ների ներկայացուցիչների ներուժը ԼԳԲՏՔԻ անձանց հիմնախնդիրների լուսաբանման շուրջ և խրախուսել ոլորտի հիմնահարցերը բարձրաձայնող լրագրողներին: Մրցույթին կարող էին դիմել Երևանի և ՀՀ մարզերի լրատվամիջոցների ներկայացուցիչներն ու անկախ լրագրողները:

Լավագույն լրագրողական նյութի գնահատման հանձնաժողովում ընդգրկված են եղել Epress.am կայքի խմբագիր Յուրի Մանվելյանը, փորձագետ Աննա Նիկողոսյանը, լրագրող Սուրեն Դեհերյանը: Նյութերը գնահատվել է հետևյալ չափանիշներով՝ անաչառություն և օբյեկտիվություն, բազմակողմանիություն, նյութի/թեմայի հանգամանալից ներկայացում, թեմայի ակտուալություն, բովանդակություն և մատուցման ձև:

Գնահատման «Նոր Սերունդ» ՀԿ-ի «Բազմազանություն-2016» լրագրողական մրցույթում Գայլ Խանդիկյանի և Նանա Շախնազարյանի «Ընդունվածները. ծնողներն աջակցում են իրենց նույնասեռական զավակներին» հոդվածը, որը հրապարակվել է 2016 թ.-ին «Ինչպես դու» լրատվականում:

Հոդվածի հեղինակը շնորհակալություն հայտնեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին՝ նման մրցանակաբաշխություն ստեղծելու համար, ինչը խրախուսում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պրոֆեսիոնալ և օբյեկտիվ լուսաբանումը:

Խրախուսական մրցանակների են արժանացել Լիլիթ Առաքելյանը («Ծեծել, վառել...». նույնասեռականների նկատմամբ բռնությունը խրախուսվում է «վերևներից», ««Քոքից վերացնել», «վառել», «մորթել». Երբ ատելության կոչերի հետեւում երևում են լրատվամիջոցների ստվերները») և Ալինա Նիկողոսյանը («Դաժան իրականություն. Հայաստանում ԼԳԲՏ-ների նկատմամբ վատ վերաբերմունքը պայմանավորված է «բացասական կարծրատիպերով»):

ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՏԵՐՍԵՔՍ

2017 թվականի ապրիլի 12-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Սեռականություն, տրանսգենդերություն և ինտերսեքս» թեմայով դասընթացը, որը անցկացնում էր նույն ՀԿ-ի աշխատակից Ալիկ Ուստյանը:

Դասընթացի ընթացքում ներկայացվեց սեռականությունը և նրա կոմպոնենտներ: Այնուհետև խոսվեց գենդերի, տրանսգենդերության, ցիսգենդերության, սեռական կողմնորոշման ինքնընկալման և վարքագծի տարբերությունների մասին, որը ընթացավ բուռն քննարկումների ուղեկցությամբ:

Որին հաջորդեց մի թեմա, որը ուղղված էր ինտերսեքս անձանց նկարագրությանը, ինտերսեքսության դրսևորումներին և ինտերսեքսներին առնչվող հիմնախնդիրներին և առկա խտրականության կանխմանը:

«ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱՄՈՒՐՋ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 19-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Սփյուռքի կամուրջ» վերնագրով հանդիպում-քննարկում, որը նախաձեռնել էր ՆՍՀԿ-ի կամավոր Հունաստանից եկած սփյուռքահայ Տիգրան Չիլինգարյանը: Հանդիպումը նախատեսված էր քննարկելու հնարավոր միջոցների և ձևերի ապահովումը սփյուռքի և Հայաստանի ազգաբնակչության միջև կապ ստեղծելու, սփյուռքում տեսանելի դարձնելու Հայաստանում առկա խնդիրները, որոնք առնչվում են ԼԳԲՏ+ համայնքին, սոցիալապես անապահով ընտանիքներին և երիտասարդությանը, որի արդյունքում ակնկալվում է սփյուռքահայերի ներգրավվածությունը և ներդրումը համայնքի խնդիրների վերացման գործունեություններում:

Հանդիպման մասնակիցները կիսվեցին իրենց գաղափարներով, որի արդյունքում մշակվեց գործողությունների հստակ համակարգ:

ԻՆՉ՞ՈՒ Է ԿԱՐԵՒՈՐ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ՄԻԱՎ-Ը. ԴԱՍԸՆԹԱՑ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

«ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2017թ.-ի ապրիլի 21-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում և 2017թ.-ի ապրիլի 22-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով:

Սեմինարի նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը երիտասարդների շրջանում՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին:
այնուհետև ներկայացվեցին մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, մարդու իրավունքների զարգացման փուլերը, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ինչպես նաև անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

«Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեմայի շրջանակներում մասնակիցները ծանոթացան իրավապահ մարմինների կատարած խախտումների և տեսական գիտելիքներ ստացան ոստիկանության հետ շփման ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ: Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՎ ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

2017 թվականի ապրիլի 27-ին Երևան քաղաքում մեկնարկեց երկօրյա աշխատանքային հանդիպում՝ «Հայաստանում ՄԻԱՎ և Տուբերկուլյոզին առնչվող ծրագրերի Գլոբալ Հիմնադրամի ֆինանսավորումից պետական ֆինանսավորման անցնելու գործընթացները և դրանց վրա քաղաքացիական հասարակության ազդեցության հնարավորությունները» թեմայով:

Աշխատանքային հանդիպումը կազմակերպել էր «Վնասի նվազեցման Եվրասիական ցանց»-ը (ՎՆԵՑ)՝ Գլոբալ Հիմնադրամի, ՄՄՀ քարտուղարության աջակցությամբ իրականացվող «Համայնքային, իրավունքների և գենդերային հարցերով տեխնիկական աջակցության» ծրագրի շրջանակներում:

Հանդիպմանը մասնակցեցին Հայաստանի քաղաքացիական հասարակության և համայնքների ներկայացուցիչները, ովքեր անտարբեր չեն տվյալ գործընթացների և հիմնական խոցելի խմբերին ուղղված, ՄԻԱՎ/ՏԲ-ին առնչվող ծրագրերի կայունության ապահովման հարցերի նկատմամբ:

Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին որոշակի գործողություններ՝ ուղղված քաղաքացիական հասարակության և համայնքների կողմից Գլոբալ հիմնադրամի աջակցությունից ազգային ֆինանսավորման անցնելու տվյալ պահին երկրում տեղի ունեցող կամ մինչև տարեվերջ տեղի ունենալիք գործընթացների ըմբռնման բարելավմանը, ինչպես նաև այդ գործընթացներում զգալի մասնակցության հնարավորությունների ընկալմանը:

ԴԱՍԸՆԹԱՑ ՀՐԱԶԴԱՆՈՒՄ

2017 թ.-ի ապրիլի 26-28-ը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն անցկացրել է «Մարդու իրավունքներ, հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով եռօրյա դասընթացը, որի երեք օրերի ընթացքում ներկայացվել են «Մարդու իրավունքներ», «Խտրականության արգելք» և «Խոսքի ազատություն, ատելության խոսք» թեմաները:

Նշենք, որ «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում նմանատիպ դասընթացներ արդեն կազմակերպվել են Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Արագածոտնի և Արարատի մարզերում:

Հրազդանում դասընթացը վարում էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Հայկ Հայրապետյանը և ծրագրերի համակարգող Նարե Հովհաննիսյանը: Դասընթացին մասնակցում էին ներկայացուցիչներ Կոտայքի մարզպետարանի մարդու իրավունքների գրասենյակից, Հրազդանի քաղաքացիական երիտասարդական կենտրոնից, ուսուցիչներ Հրազդանի թիվ 2 և թիվ 12 հիմնական, թիվ 10 և թիվ 13 ավագ դպրոցներից, ուսանողներ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջից:

Այս անգամ դասընթացը առանձնացավ նրանով, որ բավականին մեծ ակտիվությամբ մասնակցեցին նաև նշված դպրոցների աշակերտները:

Մասնակիցները նախ ծանոթացել են մարդու իրավունքների համընդհանուր հասկացությանը և պատմությանը, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերին, ՄԱԿ-ի, ԵՄ-ի և ԵԽ-ի կառուցվածքին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանին: Այնուհետև քննարկել են խտրականության սահմանումը, տեսակները և պաշտպանված հիմքերը, այն միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերը, որոնք վերաբերում են խտրականության արգելքին, մարդու իրավունքների պաշտպանության գործում պետության պոզիտիվ պարտավորությունները, մարդու իրավունքների իրավաչափ սահմանափակումների հիմքերը, վիրավորանքի, զրպարտության և ատելության խոսքի սահմանազատումները: Դասընթացը բավականին ինտերակտիվ էր: Թեմաների

մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, խտրականության և վերջինիս հաղթահարման վերաբերյալ տեսանյութեր: Խմբային աշխատանքների միջոցով քննարկել են ՄԻԵԴ-ի նախադեպային գործեր, այդ թվում «Արման Սահակյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործը, որտեղ լավագույնս են դրսևորված ներպետական օրենսդրական այն բացերը, որոնք առնչվում են մասնավորապես խտրականության մասին օրենքի և պետության հիմքով իրավակիրառ պրակտիկայի բացակայությանը:

Դերային խաղերի միջոցով մասնակիցները նաև բեմադրել են հաշմանդամության, սեռական կողմնորոշման, կրոնի և գույքային վիճակի հիմքերով ուղղակի, անուղղակի և ասոցացված խտրականության դրսևորումների գործառու-քաղաքացի, հասարակություն-քաղաքացիություն ունեցող/չունեցող անձ, պետություն-անձանց խումբ, դպրոց/ուսումնական հաստատություն-աշակերտ/ուսանող հարաբերություններում՝ վերհանելով այն իրական հիմնախնդիրները, որոնք առնչվում են խտրականության առկայությանը մեր հասարակության մեջ: Դասընթացը կազմակերպվել է «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

TEC-IT.COM

«Ժամանակին Համաքայլ» ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ԹԵԺ ԳԻԾ
+374(0)60378989

Մեր ծառայություններն են՝

Իրավական՝
- Իրավաբանական խորհրդատվություն
- Իրավական փաստաթղթերի ձևակերպում
- Քաղաքացիական և քրեական գործերով դատական ներկայացուցչություն
- Ռազմավարական պաշտպանություն

Առողջապահական՝
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային անանուն խորհրդատվություն
- Անանուն ՄԻԱՎ-ի թեստավորում և ՍՎ հետազոտություն
- Պահպանակների և լուբրիկանտների տրամադրում

Տեխնիկական աջակցություն՝
- Տարածքի տրամադրում հանդիպումների և միջոցառումների կազմակերպման համար
- Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին
- Խորհրդատվություն ՔՀԿ-ներին և աջակցություն ենթադրամաշնորհների տեսքով

New Generation Humanitarian NGO
@ngngoARMENIA
ngngo.armenia

Հայաստան 0002, ք.Երևան, Թումանյան 41, բն. 4
Apt.4, 41 Tumanyan str. Yerevan 0002, Armenia
+374 60 378989
+374 60 478989
newgenerationngngo@gmail.com
http://ngngo.net/